


ՀԱՅ Զ. ՌՌԲԵՐՏՄԻ

ՌՌԲԻՆՋՈՆ

ԿԱՏՈՒՆ



ՈՒՍՄԱՆԿԱՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ—1936

825
n-59

РЕКТЕПЕРКО Е. И.

24 JUL 2013

929

825

in-59


այ.



663
37

9

-6 NOV 2011



1

Ավագոտ և անբնակ կղզու վրա կանգնած
 եր մի ամառանոց: Մի անգամ ամառ ժա-
 մանակ այդտեղ հանգստանալու յեկավ մի
 քաղաքացի՝ իր յերեխաներով:

Կղզին միանգամից կենդանություն ստա-
 ցավ: Առավտից մինչև յերեկո յերեխաները
 վազվզում էին ափերին, լողանում ու խա-
 դեր սարքում. ամառվա ընթացքում նրանք
 լավ կազդուրվեցին ու ամրապնդվեցին:

Աշունը մոտեցավ. պետք է ամառանոցից

գնալին: Յերեխաները տխրեցին. նրանք ցավում ելին, վոր պիտի զրկվեյին ազատ կյանք վարելուց:

Գնալուց յերկու որ առաջ մի ուրիշ դժբախտություն էլ պատահեց: Յերեխաներն ուզեցին տանել իրենց սիրելի, վագրի պես աչքի ընկնող կատվին, բայց վոչ մի տեղ չգտան նրան:


Ամեն տեղ վնտուեցին, կանչեցին, բայց կատուն չերևաց:

Կղզուց հեռանալիս յերեխաները դառն արցունք թափեցին, վորովհետև կարծում եյին, թե կատուն կորած կամ մահացած պիտի լինի:

Բայց կատուն չեր մահացել: Նրան ինչ էր պատահել:

2

Կատուն դեռ գարնանից իր համար սիրելի տեղ էր ընտրել: Դա կղզու մյուս ծայրին, ավազով կիսածածկ մի հին տակառ էր, վոր-



տեղ շատ հարմար էր նրան արևի տակ քնել:

Յերեխաների ճանապարհվելուց մի որ առաջ կատուն մտել էր տակառի մեջ և քնել, իսկ այդ գիշեր սաստիկ քամի բարձրանալով, այնքան ավազ էր բերել ու անցքը ճածկել, վոր կատուն մնացել էր ավազի տակ թաղված:

Կատուն յերեք որ մնաց տակառում: Քամին նորից բարձրացավ, սկսեց ցիր ու ցան անել ավազը և կատուն վերջապես ազատ գուրս յեկավ:

Սաստիկ փոթորիկին ու անձրևին նա դժվարությամբ հասավ իր ծանոթ ամառանոցը,

բայց ամառանոցը մուժ եր ու անսիրալիր:
Վոչ վոք կատվին չդիմավորեց, յերեխաների
սովորական ձայնը չեր լսվում:

Կատուն յերկար մլավեց, ուզում եր տուն
մտնել, բայց դուռը փակ եր:

Կատուն մնաց ապշած: Յերեխաները միշտ
նրան փայփայում եյին, կուշտ կերակրում և
ինքը կերի մասին չեր մաածում:

Կատուն մի անգամ ել մլավեց — պատաս-
խան չկար: Գնաց խոհանոցի դռան մոտ, սկը-
սեց շանկուտել, բայց դուռը չբացվեց: Այդ-
պիսի բան յերբեք չեր պատահել: Նա ցատ-
կեց պատուհանի վրա, պատուհանն ել փեղ-
կերով ծածկված եր:

Կատուն ցած իջավ ներքե, սկսեց պատել
ամառանոցի չորս կողմը և ամբողջ ժամա-
նակ խղճալի ձայնով մլավել: Իսկ անձրերը
չեր դադարում: Քամին փչում եր ավելի ու-
ավելի ուժով:

Կատուն հոգնած, թրջված՝ մտավ կտուրի
տակ, կուշ յեկավ մի անկյունում և վշտից
քնովացավ:




3

Մյուս որը փոթորիկը հանդարտվեց: Արե-
զակն ուրախ նայում եր. թուշունները թռչ-
կոտում եյին դես ու դեն, թիթեռները շող-
շողում և, — վոր ամենից հետաքրքրականն
եր կատվի համար, — մկները վազվզում եյին
խոտերում:

Կատուն իսկույն բռնեց մի մուկ, հետո մի
ուրիշը և նախաճաշ արավ: Հետո նորից
վերադարձավ ամառանոցը, թռավ պատու-
հանների փեղկերի վրա, մլավեց, շանկուտեց:
Պատասխան չկար:

Կատուն նորից գնաց մկներ վորսալու. այս
անգամ այնքան կերավ, վոր ել չկարողա-
ցավ տեղից շարժվել ու պառկեց քնելու:



Յե՛վ այդպես կատուն կղզու վրա սկսեց
խնքն իրեն ապրել...

Մի անգամ նա պատահաբար մի թռչուն
վորսաց — նստեց կերավ. այդ վորսն այնպես
համով թվաց նրան, վոր դրանից հետո նա
սկսեց թռչուններ վորսալ: Կղզու վրայով
անցնում եր մի գետակ, վորի մեջ կային բա-
վական շատ մանր ձկներ:

Կատուն այժմ ել ձկնորս դարձավ. նա պառ-
կում եր ջրի մոտ և յերկար սպասում, մինչե
վոր մի վորևե անզգույշ ձուկ լողալով մո-

տենար ափին, այն ժամանակ կատուն ճար-
պիկությամբ բռնում եր նրան իր ճանկերով
ու տեղն ու տեղը ազանությամբ ուտում ա-
ռանց թերմնացքի:

4

Ամեն բան լավ կլիներ, յեթե յեղանակը
մառախլապատ չլիներ. ամեն ոք անձրև եր
գալիս, վորին փոխարինում եր փոթորիկը:
Թռչունները չվում եյին ուրիշ տեղ, մկները
ծածկվում եյին գետնի տակ: Կատվի համար
այդ լավ չեր, նա քաղցած եր մնում:

Մի անգամ փոթորիկն ափ հանեց կիսաջարդ
նավ և նրա հետ քաղցած առնետների մի ամ-
բողջ խումբ: Առնետներն արագությամբ սկը-
սեցին վազվզել կղզում, իսկ կատուն հոտն
առավ և իսկույն մեկնեց վորսալու:

Նա փորձեց մի առնետի վրա ընկնել,
բայց հեշտ բան չեր նրան հաղթելը: Նրանք
յերկար կռվեցին և կատաղած առնետը պինդ
կծեց կատվին, բայց վերջը կատուն նրան



հաղթեց ու խեղդեց, տարավ դրեց դռներէ դարավանդի մօտ: Նա կարծում եր, թե այդպիսով նա կշարժի տան մեջ փակված մարդկանց գուլթը և նրանք տեսնելով այդ՝ դուռը կբանան:

Բայց ի գուր: Դուռը չբացվեց և կատուն վշտացած՝ կերավ առնետին ու սկսեց լիզել իր վոտքերը:

Մի անգամ յերեկոյան կատուն ինչ վոր մեծ թռչուններ տեսավ: Նրանք գնում էին գետի վրայով առանց աղմուկի: Դրանք խոշոր գորշ բուեր էին. նրանց կեռ քթերով կտր գլուխները և չար աչքերը սկզբում վախեցրին կատվին, բայց նա վախկոտ չեր և շարունակում եր մկներ վորսար:

Բուն նկատեց կատվին, իսկույն նրա վրա ընկավ, սուր ճանկերով բռնեց նրան և սկսեց կտցով քանդել նրա մազերը:

Բայց կատուն ել պակաս չեր. նա յել իր մազիլներով ճանկեց բուի թևը և ատամներէ մեջ առավ: Բուն հազիվ հազ նրանից ազատվեց և թռավ:

Հետո ավելի դժվարացավ կղզում ապրելը. վրա հասավ ձմեռը. հաճախ ձյունի փոթորիկ եր բարձրանում:

Յեվ յերբ ամբողջ կղզին ձյունով ծածկվեց, միայն կատուն եր, վոր անապաստան մնաց: Կղզում մնացած բոլոր բնակիչները մի կերպ տեղավորվել էին: Առնետները ջարդված նավի տակ բներ էին փորել և մեջը մտել. մկները և նրանց ցեղակիցները գետնափոր բներ էին շինել, իսկ անտուն կատուն՝ ցրտից դողալով, կուչ եր յեկել փակված տան պատի տակ: Ամենից վատն այն եր, վոր վորս գանելը շատ դժվարացել եր: Մկներն իրենց բներում նստած՝ խոտերի արմատներ էին կուլ տալիս: Չուկ վորսալն ել չեր կարելի, վորովհետև գետը ծածկվել եր սառույցով:

Մի անգամ կատուն գնաց կղզու մյուս ծայրը և այնտեղ՝ ձյունի մեջ տեսավ շատ ծակեր. դրանք մկներին՝ գետնի տակ շինած

քների անցքերն եյին: Կատուն այդ ծակերից մեկի մոտ դարան մտավ. յերկար նստեց, սպասեց, հանկարծ բնից յերևաց մկան քիթը. Կատուն վրա պրծավ, մուկը յետ գնաց դեպի իր բռնը, բայց կատուն իսկույն գլուխը խրեց ձյունի մեջ և բռնեց նրան: Այդ դեպքը նրան շատ բան սովորեցրեց. առաջ նա չեր իմանում, թե ձյունի մեջ կարելի յե այսպես հեշտ խցկվել, գլուխը կոխել:


Նա կրկին նստեց մի ուրիշ բնի մոտ: Կըրկին մի մկան դունչ դուրս ցցվեց, բայց մինչև կատուն կհարձակվեր, նա իսկույն ծածկվեց:

Կատուն մտավ ձյունի մեջ և սկսեց ավելի ու ավելի խորը քանդել, բայց մուկն արդեն փախել, ծածկվել էր ու կատվի ճանկը բան չընկավ:

Այդ անհաջողությունը նրան կրկին մի ուրիշ բան սովորեցրեց: Կատուն զգաց, վոր ձյունի տակ ավելի տաք է, քան բաց ոդում:

Այդ գյուտի շնորհիվ ազատվեց նրա կյանքը: Կատուն տուն վերադարձավ, գնաց այն պա-





տի մոտ, վորտեղ պատուհանի տակ ձյունի կույտը մի փոքրիկ խոռոչ էր կազմել: Նա թաթը կոխեց ձյունի մեջ. ձյունը փափուկ էր, կատուն սկսեց ձյունը դեն ածել և շուտով իրեն համար մի փոքրիկ այր (մաղարա) բաց արավ: Նա իր պատրաստած այրի մեջ պնդացրեց կողքերի ձյունը և հետզհետե շինեց քամիներից ու ձյան կույտերից պաշտպանված մի հարմար փոքրիկ սենյակ: Կատուն կծկվեց նրա մեջ և խորը քուն մտավ:

Յեղանակն սկսեց տաքանալ. անձրևներ յեկան: Մկներն սկսեցին բներից դուրս գալ և ազատ խաղալ. կառվի համար հեշտացավ մկներ վորսալը:

Կատուն որեց-որ իրեն լավ ու հանգիստ էր զգում:

Գարունը յեկավ. գետակները վշվշոււմ էյին, ձյունն սկսեց հալվել. գորտերն սկսեցին կըռկըռալ, թռչունները յեկան բներ շինելու:

663 37 Կատուն այժմ կարող էր ազատ շունչ քշել, ծանր ժամանակն անցավ:

Հունիսի սկզբին կղզու ափերով մի մեծ նավ էր լողում, վորից յերեխաների ուրախ ձայներ էյին լսվում:

Կատուն այդ ժամանակ դարավանդի աստիճանների վրա՝ արևի տակ անուշ քնած էր: Նա մարդկային ձայներ լսելով՝ իսկույն զարթնեց և վոտի կանգնեց, սպասեց, ականջ դրավ ու հանկարծ մի բան հիշելով, վազեց այդ լավող ձայնի ուղղությամբ:

4092


Բ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մի ըուպեյից հետո նա արդեն նորեկ յերե-
խաների գրկումն եր:

Յերեխաները ձեռքից-ձեռք խլում էին
նրան, փաղաքշում, շատ քնքուշ անուններ
տալիս...

— Սիրունիկ, փիսիկ, ո՛հ, ինչպես դու կե-
րե՛ր, կշտացե՛ր, չաղացել ես:

Նրանք կատվին քաշքշում էյին, ձեռքից-
ձեռք խլում, բայց կատուն համբերությամբ
այդ ամենը տանում եր. ինքն հլ եր շատ
ուրախանում յերեխաներով:



Փոխադրեց ուստրեմից
Կ. Մ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ



Գրատ. խմբագիր Ա. Հայրյան Տեխ. խմբագիր Մ. Ճինիբալյան
Սրբազրէչ Մ. Գեղորգյան

Հանձնված է արտադրութեան 20/IV-36 թ. Ստորագրված է
տպելու 25/IV-36 թ. ՍՓ. ԱՅ —
Հրատարակչութեան № 3429. Տ
Типография им. Стачки 1902 г. Р
вл. Ф. Энгелс

«Ազգային գրադարան»



NL0390209

20 4М.

Р 9

929



Рассказ по Ч. Робертсу
КОТ РОБИНЗОН

АРМЕНИЗ—ЭРИВАНЬ